

3431

Բ. Ա Ս Ա Լ Ի Ն

Ճ Ա Ր

ՀԱՄ Կ (Պ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

Պ Լ Ե Ն Ո Ւ Մ Ո Ւ Մ

1928 թ. Օոյեմբերի 19. ի 6

3K33

հ - 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀՄԻ ԹՎԵՐՆԵՐԻ ԴՐԱԳԱՐԱԿԱՆ

Յ Ե Ր Ե Վ Ա 6

1928

24 JUN 2005

3K33

ՅՈՒՍԱԼԻՆ

Ճ-33, ար'

14 NOV 2009.

Ճ Ա Ռ

ՅԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏՎՈՄԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ
ՊԼԵՆՈՒՄ ՍՈՒՄ


1928 թ. նոյեմբերի 19-ին

14993

—□—

ՊԵՏԱԿԱՆ Հ ՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Տ Ր Ե Վ Ա Ն — 1 9 2 8



Բնկերներ.

Յես խոսելու յեմ Քաղբյուրոյի թեղիսներում զրված յերեք հիմնական հարցերի մասին. յերկրի ինդուստրիացման հարցի մասին և այն մասին, վոր ինդուստրիացման գործում հրամայող ֆակտոր և հանդիսանում արտադրության միջոցներ արտադրելու թափի զարգացումը, ապահովելով այդ զարգացման հնարինացման չափ արտադրության մասին մասին, վոր գյուղատնտեսության զարգացման տեմպը, ապա յես խոսելու յեմ այն մասին, վոր գյուղատնտեսության զարգացման տեմպը չափազանց լիս և մնում արդյունաբերության դարտացումից, և վոր այդ իսկ պատճառով մեր ներքին քաղաքականության մեջ ներկայիս ամենահատապ հարցն և հանդիսանում գյուղատնտեսության հարցը, մանավանդ հացահատիկի պրոբլեմը, — այն հարցը, թե ինչպես անենք, վոր բարձրացնենք և վերակառուցնենք մեր գյուղատնտեսությունը նոր տեխնիկայի հիման վրա, վերջապես, յերբորդ հարցը, այդ թերությունների և յերկու ճակատում պայքար մղելու հարցն և, և այն, վոր ներկայումս մեզանում գլխավոր վտանգը հանդիսանում և աջ վտանգը:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄՈՒ ՀԱՐՑԸ

Մեր թեղիսների յելակեան և հանդիսանում այն դրությունը, վոր ընդհանրապես ինդուստրիայի և առանձնապես արտադրության միջոցներ արտադրելու զարգացման արտադրության մասին ապահովելով յերկրի ինդուստրիացման

հիմնական սկզբունքը, լանգալին են, մեր ժողովրդական վողջ տնտեսությունը սոցիալիստական զարգացման հիման վրա վերակազմելու բանալին։ Բայց ինչ է նշանակում ինդուստրիայի զարգացման արագ տեմպ։ Այդ նշանակում ե—ավելի շատ ներդրումներ արդյունաբերության մեջ։ Իսկ այդ լարվածություն ե ստեղծում մեր բոլոր—և բյուջետային, և՝ արտաքուջետային—պլաններում։ Յեկ իսկապես, վերջին յերեք տարիների, վերակառուցման շրջանի, վերստուգիչ թվերի բնորոշ գիծն այն ե, վոր այդ թվերը մեզանում կազմվում և կիրառվում են լարվածության նշանի տակ։ Յեթե վերցընելու լինեք մեր վերստուգիչ թվերը, քննելու լինեք մեր բյուջետային նշումները, խոսելու լինեք մեր կուսակցական ընկերների հետ, —ինչպես նրանց հետ, վորոնք կուսակցական կազմակերպությունների գծով են աշխատում, այնպես ել նրանց հետ, վորոնք մեր խորհրդային, տնտեսական և կոռուպերատիվ շինարարությունն են զեկավարում, —ապա կտեսնեք, վոր ամեն տեղ և ամենուրեք նույն հիմնական գիծն ե դրսնորվում—մեր պլանների լարվածությունը։

Հարց ե ծագում, —արդյոք ընդհանրապես հարկավոր ե մեղ աշխատանքի այս լարվածությունը։ Զի՞ կալ ելի արդյոք կառավարվել առանց լարվածության։ Մի՞թե չի կարելի այդ աշխատանքը կատարել ավելի դանդաղ տեմպով և ավելի «հանգիստ» պարագայում։ Զի՞ բացատրվում արդյոք ինդուստրիայի զարգացման ասպարիզում մեր բռնած արագ տեմպը Քաղքուրոյի և Ժողովրդորհի անդամների անհանդիս բնավորությամբ։ Ինարկե, վհչ։ Քաղքյուրոյում և Ժողովրդորհում նայած են զպոն և հանգիստ մարդիկ։ Վերացականու-

րեն խոսելով, անուշադրության մատնելով ներքին ու արտաքին պարագաները՝ մենք, ինարկե, կարող կլենեյինք ավելի դանդաղ թափով առաջ տանել մեր կործը, բայց բանն այն ե, վոր նախ անհնար և անուշադրության մատնել այդ ներքին և արտաքին պարագաները և յերկրորդ՝ յեթե յենելու լինենք մեզ շրջապատող պարագաներից, ապա չի կարելի ժխտել վոր հենց այդ պարագան և մեզ թելադրում արագ թափ հաղորդել մեր ինդուստրիայի զարգացմանը։ Թույլ տվեք անցնել այդ պարագայի, այդ ներքին ու արտաքին պայմանների քննությանը, վորոնք մեզ թելադրում են զարգացման արագ թափ հաղորդել մեր ինդուստրիային։

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մենք իշխանության հասանք մի յերկրում, վորի տեխնիկան զարհուրելի հետամնաց ե։ Այս համայն չսփով նոր տեխնիկայի նվաճումների վրա հենված արդյունաբերական բազմաթիվ խոշոր միավորների կողքին մենք հարյուրավոր և հազարավոր ֆաբրիկաներ և գործարաններ ունենք, վորոնց տեխնիկան՝ ներկայիս նվաճումների տեսակետից՝ վոչ մի քննադաշտության դիմանալ չի կարող։ Մինչդեռ մեր շուրջը կան մի շարք կապիտալիստական յերկրներ, վորոնք արդյունաբերական շատ ավելի զարգացած և կատարելագործված տեխնիկա ունեն, քան մեր յերկիրը, նայեցնք կապիտալիստական յերկրներին, և դուք կտեսնեք, վոր տեխնիկան այստեղ վհչ միայն գնում, այլև ուղղակի վագում ե առաջ, յետ թողնելով արդյունաբերական տեխնիկայի հետամնաց ձևերը։ Ցիվ ահա

գուբս և գալիս, վոր մի կողմից՝ մեր յերկրում մենք ունենք աշխարհիս ամենառաջավոր իշխանություն, եթե՝ խորհրդային իշխանությունը, իսկ մյուս կողմից՝ մենք ունենք չափազանց հետամնաց տեխնիկայով մի արզունաբերություն, վորը մեզանում ոոցիալիզմի յեզ խորհրդային իշխանության բազան ե եանդիսանում: Կարծնւմ եք արդյոք, թե կարելի յե հասնել սոցիալիզմի վերջնական հաղթանակին այս հակասության առկայության պայմաններում: Ի՞նչ ե հարկավոր հիշյալ հակասությունը լիկվիդացիա անելու համար: Դրա համար պետք ե ձգտել այն բանին, վոր կարողանանք հասնել և գերազանցել կապիտալիստական զարգացած յերկրների առաջավոր տեխնիկան:

Կապիտալիստական առաջավոր յերկրներին մենք հասել և գերազանցել ենք քաղաքական նոր կարգ՝ խորհրդային իշխանություն հաստատելու իմաստով: Այս լավ ե: Բայց այս քիչ ե: Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար գեռես անհրաժեշտ ե հասնել այդ յերկրներին և գերազանցել նրանց նաև տեխնիկական-տնտեսական տեսակետից: Կամ մենք այդ նպատակին հիանենք, կամ մեզ կսրբեն: Այս ճիշտ ե վոչ միայն սոցիալիզմի կառուցման տեսակետից: Այս ճիշտ ե նաև կապիտալիստական շրջապատման պայմաններում, մեր յերկրի անկախության պաշտպանության տեսակետից:

Անհնար ե պաշտպանել մեր յերկրի անկախությունը՝ արդյունաբերական բարերար բազա չունենալով պաշտպանության համար: Անհնար ե ստեղծել նաև արդյունաբերական բազա, չունենալով բարձը տրդյունաբերական տեխնիկա:

Ահա թե ինչու համար ե անհրաժեշտ, ահա թե ինչն ե թելաղըում մեզ ինդուստրիայի զարգացմանն արագ թափ հաղորդել:

Այս հետամնացությունը դարավոր հետամնացությունն ե, վոր մեզ ժառանգություն ե մնացել մերկրի ամրող անցյալ պատմությունից: Այս հետամնացությունը վորպիս չարիք զգացվում եր և առաջ, նախանեղափոխական շրջանում, թե հետո, հեղափոխական շըրջանում: Եերբ Պիտրոս մեծը, գործ ունենալով արեմոյան ավելի զարգացած յերկրների հետ, բանակին անհրաժեշտ նյութերը հայթայթելու և յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու համար տենդագին թափով գործարաններ ու ֆաբրիկաներ եր կառուցում, այլադայրահատուկ մի փորձ եր՝ հետամնացության շըրջանակներից դուրս ցատկելու համար: Սակայն միանգամայն հասկանալի յե, վոր հին դասակարգերից և վոչ մեկը՝ վոչ ֆեոդոլական արիստոկրատիան և վոչ ել բուրժուազիան՝ չկարողացավ վճռել յերկրի հետամնացությունը լիկվիդացիա անելու խնդիրը: Դեռ ավելին, այդ դասակարգերը վոչ միայն չկարողացան լուծել այդ խնդիրը, այլև նրանք անընդունակ գտնվեցին այդ խնդիրը քիչ-շատ բավարար ձևով դնել: Մեր յերկրի դարավոր հետամնացությունը՝ կարելի յե լիկվիդացիա անել միմիայն սոցիալիստական հաջող շինարարության հիման վրա, իսկ լիկվիդացիա անել այդ հետամնացությունը կարող ե միայն պրոլետարիատը, վոր արդեն կառուցել ե իր դիկաստուրան և իր ձեռքն առել յերկրի ղեկավարությունը:

Հիմարություն կլիներ միմիթարվել նրանով, թե քանի վոր մեր յերկրի հետամնացությունը մենք չենք

հնարել, այլ այն ժառանգություն և մոացել մեզ մեր յերկրի ամբողջ պատմությունից, ապա, ուրեմն մենք չենք կարող և չպիտի պատասխանատու լինենք դրա համար։ Այս սխալ ե, ընկերներ։ Քանի վոր մենք մեր ձեռքն ենք վերցրել իշխանությունը և յերկիրը սոցիալիզմի հիման վրա վերակառուցելու պարտականություն ենք հանձն առել, ապա մենք պատասխանատու լինք և պետք ե պատասխանատու լինենք թե այն բոլորի համար, ինչ լույլ ե, և թե այն բոլորի համար, ինչ վատ ե։

Եեվ հենց այն պատճառով, վոր մենք ենք պատասխանատու այդ ամենի համար, ուրեմն և պետք ե լիկվիդացիա անենք մեր տեխնիկական-տնտեսական հետամնացությունը։ Մենք անպայման պետք ե կատարենք այդ գործը, յեթե իսկապես ցանկանում ենք հասնել առաջավոր կապիտալիստական յերկրներին և նրանցից առաջ ընկնել։ Իսկ այդ անել կարող ենք միմիշայն մենք, բայց էիկներս, և ուրիշ վոչ վոք։ Հենց նրա համար, վոր այդ ինդիրը կարողանանք կիրառել կյանքում, մենք պետք ե սիստեմատիկորեն իրականացնենք մեր ինդուստրիայի զարգացման արագ տեմպը (իսկ վոր մենք այժմ իրականացնում ենք մեր ինդուստրիայի՝ զարգացման արագ տեմպը, այդ տեսնում են ամենքը)։

Այն հարցը, թե մենք տեխնիկական-տնտեսական տեսակետից՝ պետք ե հասնենք ու անցնենք առաջավոր կապիտալիստական յերկրներին, այս հարցը մեզ, բայց էիկներիս համար վոչ մի նորություն, վոչ մի անսպասելի բան չի ներկայացնում։ Այդ հարցը մեզ մոտ դրվում եր դեռ 1917 թվին, նախահոկտեմբերյան

շրջանում։ Այդ հարցը հարուցել ե լենինը դեռ 1917 թվի սեպտեմբերին, Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին, իմպերիալիստական պատերազմի շրջանում, իր՝ «Փալիք կատաստրոֆան և ինչպես կովել նրա դեմք բրոշյուրի մեջ։

Ահա թե ինչ և ասել լենինն այդ առթիվ. «Նեղափոխությունն այն արավ, վոր Ռուսաստանը միանի ամսում իր քաղաքական կարգով հասավ առաջավոր յերկրներին։ Բայց այս բիչ ե. Պատերազմն անգուք ե յեվ հարցը դնում ե անողոք սրությամբ. — Կամ կործանվել, կամ հասնել առաջապես յերկրներին յեվ անցնել երանց նայեվ տնտեսական տեսակետից... Եօրծանվել, կամ ամբողջ քափով ու արագությամբ սլանալ առաջ. Պատմությունն այգաես ե գրել հարցը։ (Հատոր 14, մաս 2-րդ, եջ 213)։ Ահա թե վորքան սուր կերպով եր դնում լենինը մեր տեխնիկական տնտեսական հետամնացությունը լիկվիդացիա անելու հարցը։

Այս բոլորը լենինը գրել ե Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին, յերբ դեռ պրոլետարիատն իր ձեռքը չեր առել իշխանությունը, յերբ բայց էիկները դեռ վոչ իշխանություն ունենին, վոչ համայնացված արդյունաբերություն, վոչ միլիոնավոր գյուղացիներ ընդգրիս լայն ճյուղավորված կոոպերացիա, վոչ ել կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ։ Այժմ արդեն, յերբ մենք ունենք վորոշ եյական նվաճումներ մեր տեխնիկական-տնտեսական հետամնացությունն արմատով լիկվիդացիա անելու համար, մենք կարող եյինք ձևափոխել լենինի խոսքերը մոտավորապես այսպես. «Մենք հասանք կապիտալիստական առաջա-

վոր յերկրներին և անցանք նրանց քաղաքական տեսակետից, պրոլետարիատի դիկտատուրան կառուցելով։ Բայց այդ քիչ ե, մենք պետք ե ռգտագործենք պրոլետարիատի դիկտատուրան, մեր համայնացրած արդյունաբերությունը, տրանսպորտը, վարկային սիստեմը և այլն, կոռուպիրացիան, կողլեկտիվ տնտեսությունները, խորհրդային տնտեսությունները և այլն, վորպեսզի կարողանանք համել կապիտալիստական առաջավոր յերկրներին և անցնենք նրանց նաև տնտեսական առաջարիգում։

Ինդուստրիայի զարգացման արագ տեմպի հարցը մեզանում այնքան սուր բնույթ չեր ունենա, ինչպես այժմ, յեթե մենք ունենայինք նույնպիսի զարգացած արդյունաբերություն և նույնպիսի զարգացած տեխնիկա, ինչպես, որինակ Թերմանիան, յեթե մեր ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ ինդուստրիայի տեսակարար կշիռը նունյքան, բարձր լիներ, ինչպես, որինակ, Թերմանիայում։ Այդ գեղքում մենք կարող ենք ավելի զանդաղ տեմպով զարգացնել ինդուստրիան, առանց յերկյուղ կրելու, թե յետ կմնանք կապիտալիստական յերկրներից, գիտենալով, վոր կարող ենք մի հարվածով անցնել նրանց։ Սակայն այդ գեղքում մեզանում գոյություն չեր ունենա տեխնիկական տնտեսական այն լուրջ հետամնացությունը, վոր այժմ կա։ Բայց բանն ել հենց այն ե, վոր մենք այս տեսակետից Թերմանիայից յետ ենք և տեխնիկական տնտեսական տեսակետից ամենեին ել չենք հասել նրան։

Ինդուստրիայի զարգացման արագ տեմպի հարցն այնքան սուր բնույթ չեր ունենա նաև այն գեղքում,

յեթե մենք պրոլետարիատի դիկտատուրայի մեակ յերկիրը չլինելինք, այլ միայն պրոլետարական դիկտատուրայի յերկրներից մեկը, յեթե պրոլետարական դիկտատուրան հաստատված լիներ վճչ միայն մեր յերկրում, այլ և մյուս, ավելի առաջավոր յերկրներում, որինակ Գերմանիայում և Ֆրանսիայում։ Այն պայմանում, յերե կապիտալիստական ողակավորումը մեղ համար այնպիսի լուրջ վտանգ չհանդիսանար, ինչպես այժմ—մեր յերկրի մնանական ինքնուրույնության հարցը, բնականաբար, յերկրորդական տեղ կրներ և մենք կարողանայինք մտնել պրոլետարական ավելի զարգացած պետությունների սիստեմի մեջ։ Մենք կարողանայինք նրանցից մեքենաներ ստանալ մեր արդյունաբերության և գյուղատնտեսության բեղմավորման համար, նրանց հայթայթելով հումույթ, պարենավորման մթերքներ, հետևաբար, մենք կարողանայինք մեր ինդուստրիան ավելի պակաս արագ տեմպով զարգացնել։

Բայց դուք լավ գիտեք, վոր գետ չկա այդ պայմանը. մենք գենես պրոլետարական դիկտատուրայի միակ յերկրն ենք՝ շրջապատված կապիտալիստական յերկրներով, վորոնցից շատերը մեզանից խիստ առաջ և ան տեխնիկական տնտեսական տեսակետից։

Անա թե ինչու տնտեսապես առաջավոր յերկրներին համելու և նրանցից առաջ ընկնելու հարցը լենինը համարում եր մեր զարգացման կյանքի ու մահվան հարց։

Սրանք են այն արտարին պայմանները, վորոնք մեղ թելադրում են մեր ինդուստրիայի զարգացմանն ավելի արագ տեմպ տալ՝ վորպես մեր ամբողջ ժողովում,

վըրդական տնտեսության ղեկավար սկզբունք: Յես նկատի ունեմ մեր հողագործության ծալքահեղ հետամացությունը, նրա տեխնիկան և նրա մշակույթները: Յես նկատի ունեմ այն, վոր մեր յերկրում գոյություն ունի մանր արտադրողների գերիշխան մեծամասնություն՝ բաժան-բաժան, բոլորովին հետամնաց արտադրությամբ, վորի հետ համեմատած, մեր խոշոր սոցիալիստական արդյունաբերությունը մի կղզի յե ծովում, կղզի, վորի բազան որեցոր ընդարձակվում ե, վորը, սակայն, այնուամենայնիվ, դեռ մի կղզի յե ծովում: Մեզանում սովորաբար ասում են, թե ինդուստրիան ժողովրդական ամբողջ տնտեսության, այդ թվում նաև գյուղատնտեսության, ղեկավար սկզբունքն ե, թե ինդուստրիան այն բանալին ե, վորի միջոցով կարելի յե հետամնաց, բաժան-բաժան հողագործությունը վերակառուցել կոլեկտիվիզմի բազայի վրա: Այս միանգամայն ճիշտ է: Յեվ սրանից չպետք ե նահանջենք վոչ մի բոպե: Բայց պետք ե հիշել և այն վոր յեթե ինդուստրիացումը ղեկավար սկզբունք ե, ապա գյուղատնտեսությունը հանդիսանում ե ինդուստրիայի զարգացման բազան և վորպես ինդուստրիայի պրոդուկցիան սպառող մի շուկա, և վորպես հումույթ ու մթերք հայթայթող, և վորպես մի աղբյուր եքսպորտի ուղղերթերի, վորոնք անհրաժեշտ են, վորպեսկի ժողովրդական տնտեսության կարիքների համար սարքագորում ներմուծենք: Կարելի՞ յե առաջ տանել ինդուստրիան, թողնելով գյուղատնտեսությունը բոլորվին հետամնաց տեխնիկայի պայմաններում, չափահովելով ինդուստրիայի համար գյուղատնտեսական բազա, չվերակառուցելով գյուղատնտեսությունը

և ինդուստրիալին չմոտեցնելով այս: Նոչ, չի կարելի: Այստեղից խնդիր ե ծագում՝ առավելագույն չափով ապահովել գյուղատնտեսությունն արտադրության միջոցներով և գործիքներով, վորոնք անհրաժեշտ են արագացնելու և առաջ շարժելու նրա վերակառուցման գործը՝ տեխնիկական նոր բազայի վրա: Բայց այդ խնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ ե մեր ինդուստրիայի զարգացման արագ տեմպ: Հարկավ բաժան-բաժան և ցիրուցան գյուղական տնտեսությունների վերակառուցումն անհամեմատ ավելի ծանր գործ ե, քան միավորյալ կենտրոնացված սոցիալիստական արդյունաբերության վերակառուցումը:

Բայց այս խնդիրը դրված ե մեր առջև, և մենք պիտի լուծենք այս: Խեկ այս խնդիրը կարելի յե լուծել միայն արդյունաբերության զարգացման արագ տեմպի վրա հիմնվելով: Զի կարելի անվերջ, այսինքն՝ չափազանց յերկար ժամանակաընթացքում, խորհրդացին իշխանությունը և սոցիալիստական շինարարությունը հենել յերկու տարրեր հիմքերի վրա՝ ամենախոշոր միավորյալ սոցիալիստական արդյունաբերության հիմքի և ամենից ավելի տրորված հետամնաց: մանր ապրանքային գյուղացիական տնտեսության հիմքի վրա:

Պետք ե աստիճանաբար, բայց սիստեմատիկաբար և համառորեն փոխադրել գյուղատնտեսությունը տեխնիկական նոր բազայի վրա, խոշոր արտադրության բազայի վրա, սոցիալիստական արդյունաբերությանը մոտեցնելով այս: Կամ կլուծենք այս խնդիրը, և այն ժամանակ ապահովված ե վերջնական հաղթանակը, կամ կհեռանանք այս խնդիրից, և չենք լուծի

այն—և այն ժամանակ վերադարձը գեղի կապիտալիզմն անխուսափելի յերևույթ կարող է դառնալ:

Ահա թե ինչ է անում այս առթիվ Լենինը. «Քա նի դեռ մենք ապրում ենք մամր-գյուղացիական մի յերկրում, Ռուսաստանում կապիտալիզմի համար գոյուրյուն ունի ավելի ամուր տեսերական բազա, քան կոմունիզմի համար»:

Սնեհրածես ե հիշել այս. Գյուղի կյանքն ու սաղրուրյամբ զիտող յեվ այդ՝ բաղաքի կյանքի հետ համեմատող ամեն վոյ գիտե, վոր մենք կապիտալիզմը արմատախիլ չենք արել յեվ ենքին թօնամու հիմքը չենք խախտել. Այդ քենամին մանր տնտեսուրյան շնորհիվ ե ապրում յեվ երան վոյնչացնելու համար կա մի միջոց, այն ե՝ յերկրի տնտեսուրյունը, այդ բվում նայեվ հողագործուրյունը, ֆոխադրել ժամանակակից խոռոր արտագրուրյան տեխնիկական նոր բազայի վրա, իսկ այդ բազան միմիայն ելեկտրականուրյունն ե՝ կոմունիզմը—այդ խորհրդային իշխանուրյունն ե պլուս ամբողջ յերկրի ելեկտրիֆիկացիան։ (Ռուսերեն հրատարակություն, հատոր 17, էջ 427—428):

Այդ ճառը լենինն արտասահնել ե խորհուրդնիրի 8-րդ համագումարում 1920 թվականի դեկտեմբեր ամսին, նեպը մացնելու հենց նախորյակին, յերբ նա հիմնավորում եր այսպես կոչված ելեկտրիֆիկացիայի պլանը, այսինքն ՀՕԵԼՊՕ պլանը։ Այս հիման վրա միքանի ընկերներ ասում են, թե լենինի այս ցիտատում արտահայտած նկարունքներն անկործակրելի լեն այլև այժմյան իրականության մեջ։ Հարց է ծագում՝ ինչո՞ւ Այն պատճառով—ասում են նրանք,—վոր շատ

ջուր ե հոսել այն որվանից։ Մենք այժմ դռնենք սոցիալիստական զարգացած արդյունաբերություն, մենք ունենք կոլեկտիվ տնտեսություններ, վորպես մասսայական յերևույթ, մենք ունենք հին և նոր խորհրդային անտեսություններ, մենք ունենք զարգացած կոստերատիվ կողմակերպությունների ճոխ ցանց, մենք ունենք վարձակայաններ՝ գյուղացիական անտեսությունների սպասարկման համար, մենք կիրառում ենք կոնտրակտացիայի մեթոդը, վորպես կապի մի նոր ձև, մենք կարող ենք բանի դնել այս բոլոր և ուրիշ շատ լծակներ գյուղատնտեսությունն աստիճանաբար նոր տեխնիկայի բազայի վրա փոխադրելու համար։ Այս ամենը ճիշտ ե Սակայն ճիշտ ե նաև այն, վոր չնայած այս բոլորին, մենք գեռես մանր-գյուղական յերկիր ենք, վորտեղ գերիշխում ե մանր արտադրությունը։ Իսկ հիմնականն այս ե։ Յեվ քանի այս հիմնականը մնում ե, պահպանում ե իր ուժը, լենինի այն թեղիսը, թե՝ «քանի դեռ մենք ապրում ենք մանր գյուղացիական յերկում» մեզ մոտ կապիտալիզմի համար գոյություն ունի ավելի ամուր անտեսական բազա, քան կոմունիզմի համար։ ուրեմն և կապիտալիզմի վերականգնման վատանգը գալուրկ ֆրազ չե։

Նույնն ե ասում լենինը ամենասուր ձեռվ նաև «Պարենհարկի մասին» վերնագրով իր բրոշյուրի պլանում, վոր գրել ե արդեն նեպը մացնելուց հետո (ապրիլ - մայիս 1921 թ.):

«Յեթե 10-20 տարուց հետո ելեկտրիֆիկացիան լինի, ապա ամեններն զարհուրելի չի լինի մանր հողադրծի ինդիվիդուալիզմը և ազատ առևտուրը նրա տեղական շրջանառության մեջ։ Յեթե ելեկտրիֆիկացիան

չլինի, ապա, միւնույնն ե, չենք կարող խուսափել դեպի կապիտալիզմը վերադառնալուց»:

Յեզ ապա նույն տեղում ասված ե. «10—20 տարի ճիշտ փոխարաբերություններ գյուղացիության հետ—և ապահոված ե հաղթանակը համաշխարհային մասշտարով (նույնիսկ յեթե ուշանան պրոլետարական հեղափոխությունները, վորոնք աճում են), այլապիս 20—40 տարի տանջանքներ և սպիտակ-գվարդիական տերոր» (Հենինյան ժողովածու, IV, եջ 37): Ահա ինչպես սուր կերպով ե դնում հարցը կենինը՝ կամ ելեկտրիֆիկացիա, այսինքն յերկրի տնտեսության, այդ թվում նաև գյուղատնտեսության, փոխադրումը ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական նոր բաղայի վրա, կամ վերադարձ դեպի կապիտալիզմը»:

Ահա թե ինչպես ե հասկանում կենինը «գյուղացիության հետ ճիշտ փոխարաբերությունների» հարցը, Բանն այն չե, վոր մենք շոյենք գյուղացուն և այդ համարենք նրա հետ ճիշտ փոխարաբերությունների հաստատում, վորովհետև շոյումը մեզ հեռու չի տանի, այլ այն, վոր ողնինք գյուղացուն փոխադրելու իր տնտեսությունը «ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական նոր բաղայի վրա», վորովհետև այդ ե գյուղացիությունը չքավորությունից փրկելու հիմնական ուղին:

Իսկ անկարելի յե յերկրի տնտեսությունը փոխադրել տեխնիկական նոր բաղայի վրա՝ առանց մեր ինդուստրիայի և ամենից առաջ արտադրության միջոցների արտադրման զարգացման արագ տեմպի:

Այդպես են մեր ներքին պայմանները, վորոնք

մեզ թելապում են արագ տեմպ տալ ինդուստրիայի զարգացմանը:

Ահա թե արտաքին և ներքին ինչ պայմաններից ե բղխում մեր ժողովրդական տնտեսության վերստուգիչ թվերի լարվածությունը:

Ահա այն հիմքը, վոր մեր բյուջետային և արտաբյուջեալին տնտեսական պլանները մշակվում են լարվածության նշանի տակ, հիմնական շինարարության մեջ խոշոր ներդրումներ անելու նշանի տակ, ներդրումները, վորոնց նպատակն ե՝ պահել ինդուստրիայի զարգացման արագ տեմպը:

Կարող են հարցնել, թե վհրտեղ ե ասված այդ և թեզերի վրա մասում:

Զայթ.—Այն, վհրտեղ ե ասված այդ:

Ստալին.—Այդ մասին թեզիսներում խոսում ե՝ արդյունաբերության 28—29 թ. հիմնական ներդրումների գումարը: Գե վոր թեղիսները կոչվում են վերստուգիչ թվերի թեզիսներ: Այդպես ե, կարծեմ, լուկերներ:

Զայթ.—Այն:

Ստալին.—Այդպես, ուրեմն, այդ թեզիսներում ասված ե, վոր մենք արդյունաբերության և հիմնական աշխատանքներին 28—29 թ. հատկացրել ենք 1,650 միլիոն ոռուբլի: Այլ խոսքով՝ այս տարի մենք արդյունաբերության վրա ծախսելու յենք 330 միլ. ոռուբլով ավելի, քան անցյալ տարի: Այդպիսով դուրս ե գալիս, վոր մենք վնչ միայն պահպանում ենք ինդուստրիայի զարգացման տեմպը, այլ գեռ մի քայլ եւ առաջ ենք գնում, արդյունաբերությանը հաջինացնելով: անցյալ տարվանից ավելի, այսինքն ուժեղացնելով՝ ար Ա Ս Յ Ա Ռ Ո Ւ Խ Կ Ե Ր Ա Ա Վ Ա Ն

դյունաբերության հիմնական աշխատանքները թե բացարձակորեն և թե համեմատաբար: Այստեղ և ժողովրդական տնտեսության ստուգիչ թվերի թեզիսերի առանցքը իսկ ընկերներից վոմանք «հենց փղին չնկատեցին», փղին, ծուռումուս բծախնդրությամբ քննադատում եյին վերստուգիչ թվերի թեզերը, իսկ ամենագլխավորը չնկատեցին:

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԹՐՈՓԼԵՄԸ

Մինչև այժմ յես խոսում եյի թեզիսների առաջին հիմնական հարցի մասին, այն ե՛ ինդուստրիայի զարգացման տեմպի մասին: Այժմ անցնենք յերկրորդ հիմնական հարցին՝ հացահատիկի պրոբլեմին: Թեզիսների բնորոշ գիծն այն ե, վոր նրանք ծանրության կենտրոն են դարձնում ընդհանրապես գյուղատնտեսության և մասնավորապես հացահատիկի տնտեսության զարգացման պրոբլեմը: Ճիշտ ե թեզիսների այդ գիրքավորումը: Յես կարծում եմ՝ ճիշտ ե: Դեռ հուլիսյան պլինումում խոսվում եր, վոր մեր ժողովրդական տնտեսության զարգացման գժվարությունն ընդհանրապես մեր գյուղատնտեսության և առանձնապես հացահատիկային տնտեսության ծայրահեղ հետամնացությունն ե: Յերբ ասում են, թե մեզանում կյուղատընտեսությունը յետ ե մնում արդյունաբերությունից, և դանդատվում են այդ հանգամանքից, առաջ այդ, ինարկե, լուրջ չե: Գյուղատնտեսությունը միշտ յետ և մնացել արդյունաբերությունից և յետ ե մնալու: Այս հատկապես ճիշտ ե մեր պայմաններում, վորտեղ արդյունաբերությունը մեծագույն չափով համակենտրոնացած ե, իսկ գյուղատնտեսությունը մեծագույն չա-

փող ցրված: Հասկանալի յե, վոր միավորյալ արդյունաբերությունն ավելի արագ կզարգանա, քան ցըված զյուղատնտեսությունը: Սրանից ե բջիռում, իմիջի ալուց, արդյունաբերության սուաջնորդող դերը գրուղատնտեսության սովորական յետ մնալն արդյունաբերությունից դեռ հիմք չի տալիս մեղ հացահատիկի պրոբլեմ դնել: Գյուղատնտեսության և մասնավորապես հացահատիկի տնտեսության պրոբլեմը հանդես ե գալիս միայն այն ժամանակ, իբրև գյուղատնտեսության սովորական յետ մնալն ինդուստրիայից փոխվում ե գյուղատնտեսության: Ժողովրդական տնտեսության ներկա դրության բնորոշ գիծն այն ե, վոր մեզանում փաստ ե հացահատիկի տնտեսության զարգացման տեմպի չափազանց հետամնացությունն ինդուստրիայի զարգացման տեմպից, ինչպես և այն, վոր հակայական շափով աճել ե ապրանքային հացահատիկի պահանջը՝ աճող քաղաքաների և արդյունաբերական վայրերի կողմից:

Ընկ վորում խնդիրն այն չե, վոր ինդուստրիայի զարգացման տեմպը թուլացնենք, հացահատիկի տընտեսության մակարդակին հասցնելով այն (այդ տակն ու վրա կաներ մեր բոլոր ծրագրերը և զարգացումը զեղի յետ կղարձներ), այլ այն ե, վոր հացահատիկի տնտեսության զարգացումը հասցնենք ինդուստրիայի զարգացման տեմպին և բարձրացնենք հացահատիկի տնտեսության զարգացման տեմպը մի մակարդակի, վորն ապահովի ժողովրդական ամբողջ տնտեսության՝ արդյունաբերության և հողագործության արագ առաջնաղացումը:

Կամ մենք կլուծենք խնդիրը, և հենց զբանով իշտ կլուծվի հացահատիկի պրոբլեմը, և կամ մենք չենք կարողանա. լուծել այդ խնդիրը, և այն ժամանակ անխռովագելի կլինի սոցիալիստական քաղաքի և մանր գյուղացիական գյուղի կապի խղումը. Ալգաս և գըրված խնդիրը, ընկերներ. Այս և հացահատիկի պրոբլեմի եյտթյունը:

Չի՞ նշանակում արդյոք այս, վոր մենք այժմ գործ ունինք «անշարժության» հետ հացահատիկի տնտեսության «ճացման» և կամ նույնիսկ նրա «գեղրադացիայի» հետ. Ընկ. Ֆրումկինը հենց այդպես ել գնում և հարցն իր յերկրորդ նամակում, վորը նրա պահանջով մենք այսոր բաժանեցինք կենտկոմի և կվչ անդամներին: Նա այդ նամակում ուղղակի ասում ե, թե մեր գյուղատնտեսության մեջ «ճացման» կա:

«Դեղրադացիայի մասին.—ասում ե նա, — մենք չենք կարող գրել մամուլում, բայց կուսակցության մեջ մենք չպետք ե թագոնենք, վոր այս յետ մնալը հավասար ե գեղրադացիայի»: Ճիշտ ե արդյոք ընկ. Ֆրումկինի այս պնդումը: Իհարկե ճիշտ չե: Մենք, Քաղյուրոյի անդամներս, հիմնովին տարամիտում ենք մեր հացահատիկի տնտեսության կացության հարցի նման լուսաբանության հետ:

Իսկապես, ի՞նչ բան ե գեղրադացիան և ի՞նչով նա պիտի արտահայտվի գյուղատնտեսության մեջ. դա ակներկորեն պիտի արտահայտվի գյուղատնտեսությունը դեպի յետ, դեպի ցած մղերով և տնտեսարարության նոր ձևերից դեպի հին, դեպի միջնադարյան ձեփերը տանող շարժումով: Դա պետք ե արտահայտվի նրանով, վոր գյուղացիությունը, ասենք, յեռագալու

սիստեմից անցնի հարոսային (ուրեղօջու) տնտեսության, զութանից և մեքենայից՝ արորին, զտվածու ընտիր տեսակի սերմացուից՝ չզտված և հասարակ սերմացուին, հողագործության ժամանակակից կուլտուրային, և այլն և այլն:

Բայց միթե այժմ նման յերևույթներ նկատվում են: Միթե ամենքին և յուրաքանչյուրին հայտնի չե, վոր գյուղացիությունն ամեն տարի տպանյակ և հարյուր հազար տնտեսություններով յեռադաշտից ու քառաղացտից անցնում ե բազմադաշտ սիստեմին, հասանակ սերմացուից՝ ընտիր տեսակի սերմացուին, արորակ սերմացուից՝ ընտիր տեսակի սերմացուին, արորից՝ գութանին ու մեքենային և հողագործության ցածը կուլտուրայից գեպի նրա բարձր կուլտուրան: Իսկ սա ի՞նչ գեղրադացիա յե:

Ընկ. Ֆրումկինն իր տեսակետը հիմնավորելու համար առհասարակ սիրում ե բոնել Քաղըուրուի այս կամ այն անդամի փեշերից. միանգամայն հնարավոր կամ այն անդամի փեշերից. միանգամայն բուխարիե, վոր նա տվյալ դեպքում ել բոնի ընկ. Բուխարիե, վոր նա տվյալ դեպքում ել բոնի ընկ. Բուխարիե փեշերից, վորպեսզի ապացուցի, թե ընկ. Բուխարիենը ընույնն ե ասում իր «Եկոնոմիստի դիտողություններ» հոդվածում: Սակայն Բուխարինն ամեններ նույնը չի ասում: Ընկեր Բուխարինն իր հոդվածում դրել ե մի վերացական թերիական հարց՝ գեղրադացիությունը հարցի հնարավորության կամ վտանգի մասին: Դատելով վերացականորեն, հարցի նման զրվածքը միանտելով վերացականորեն, հարցի նման զրվածքը միանտելով վերացականության հարցը զարձնում ե գյուղատնտեսության գեղրադացիայի փաստ: Յեպ այս նա անվանում ե հացա-

հատիկի տնտեսության վիճակի վերլուծություն։ Ընկերներ, միթե ծիծաղելի չե այս։

Էալ խորհրդային իշխանություն կլիներ, յեթե նա իր գոյության 11-րդ տարում գյուղատնտեսությունը դեգրադացիայի հասցներ։ Այս, այդպիսի իշխանությունը հարկավոր եր վրանդել, և վոչ թե պաշտպանել։ Յեզ բանվորները վաղուց արդին վրանդած կլինիին այդ իշխանությունը, յեթե նա գյուղատնտեսությունն իսկապես հասցներ դեգրադացիայի։

Մենք ունենք բուրժուական ամեն տեսակի սպեցներ, վորոնք քնում են ու յերազում աեսնում, թե գյուղատնտեսությունը դեգրադացիայի յենթարկվում։

Դեգրադացիայի մասին մի ժամանակ յերգել ենաև Տրոցկին։ Յես չեյի սպասում, թե ընկ. ֆրումեկինը ևս կկանգնի այդ կասկածելի ճանապարհի վրա։

Ի՞նչի՞ վրա յե հիմնում ընկ. ֆրումեկինն իր պըն դումը դեգրադացիայի մասին։ Ամենից առաջնրա վրա, վոր այս տարի մեզանում հացահատիկների ցանքն ավելի քիչ տարածություն ե բռնում, քան անցյալ տարի։ Ի՞նչնվ ե բացարկում այս փաստը։ Դուքն խորհրդային իշխանության քաղաքականությամբ։ Ինարկե վոչ։ Այդ բացարկում ե նրանով, վոր աշնանացանքն Ուկրաինայի տափաստաններում, մասսամբ ել չյուսիսային կովկասում, փչացել ե, այլ և այն յերաշտով, վոր այս տարի յեղավ Ուկրայինայի նույն շրջաններում։ Յեթե չինեյին կիմայական այդ անբարենպաստ պայմանները, վորոնցից ամբողջությամբ և լիովին կախված ե գյուղատնտեսությունը, ապա այս տարի մեղանում հացահատիկների ցանքսի տարածությունը

գոնե մի միլիոն դեսիատինով ավելի կլիներ, քան անցյալ տարի։

Ապա նա իր պնդումը հիմնավորում ե նրանով, վոր հացահատիկների ընդհանուր արտադրանքն այս տարի միայն միքիչ ե ավելի անցյալ տարվանից (ավելի յե 70 միլիոն փթով), իսկ ցորենն ու հաճարը պակաս են 200 միլիոն փթով։ Խնչնվ ե բացարկվում միենույն յերկություններով։ Յեթե չինեյին կիմայական այս անբարենպաստ պայմանները, մեր հացի ընդհանուր արտադրանքն այս տարի 300 միլիոնով ավելի կլիներ, քան անցյալ տարի։

Ի՞նչպես կարելի յե աչքաթող անել - այնպիսի փակտորները, ինչպես յերաշտը, սառնամանիքները և այլ նման յերկություններ, վոր վճռական նշանակություն ունեն այս կամ այն սայոնի համար։

Մեր խնդիրն ե այժմ—ընդհարձակել ցանքսերի տարածությունը 7 տոկոսով, բարձրացնել բերքատվությունը 3 տոկոսով և ավելացնել հացամթերքների ընդհանուր արտադրանքը, կարծեմ, 10 տոկոսով։

Կասկած չի կարող լինել, վոր մենք ամեն միջոց ձեռք կառնենք այս խնդիրների իրագործման համար։ Սակայն անհնար չե նաև այն, վոր, չնայած մեր շեռնարկումներին, մենք նորից դեմ առնենք մասնակի անբերքատվության, ցանքսերի ցրտահարության, կամ յերաշտի այս կամ՝ այն շրջանում, ըստ վորում համարավոր ե, վոր այդ պարագաների հետևանքով հացահատիկի կուլտուրաների ընդհանուր արտադրանքը վորոյ չափով մեր ծրագրի համեմատությամբ, կամ չափով նվազի մեր ծրագրի համեմատությամբ,

մինչև իսկ այս տարվա ընդհանուր արտադրանքի համեմատությամբ:

Արդյոք այդ կնշանակի՞, թե գյուղատնտեսությունը «գեղադաշիայի լեռնաթարկվում», թե այդ «գեղադաշիայի» համար մեղավոր ե խորհրդային իշխանության քաղաքականությունը, թե մենք գյուղացուն զրկել ենք տնտեսական շահագրզությունից, թե մենք նրան «զրկել ենք» տնտեսական հեռանկարից:

Միքանի տարի առաջ Տրոցկին ել նույն սխալն եր անում, պնդելով, վոր անձրես նշանակություն չունի գյուղատնտեսության համար: Ընկեր Ռիկովս նրան առարկում եր, պաշտպանություն գտնելով կենտկոմի անդամների ահազին մեծամասնության կողմից: Այժմ ընկ: Ֆրումկինը նույն սխալն ե անում, զանց առնելով կլիմայի պայմանները, վորոնք վճռական նշանակություն ունեն գյուղատնտեսության համար, և ջանալով ամեն ինչ դցել մեր կուսակցության քաղաքականության վրա:

Վորոնք են այն ուղիները և յեղանակները, վոր անհրաժեշտ են ընդհանրապես գյուղատնտեսության, առանձնապես հացահատիկի տնտեսության զարգացման տեմպը բարձրացնելու համար:

Այդպիսի յերեք ճանապարհ կամ կանալ կամ քառականական բարձրացում, չքավորմիջակ անհատահական տնտեսությունների ցանքսերի ընդլայնում, կոլեկտիվ տնտեսությունների հետագա զարգացում, հին խորհրդային տնտեսությունների ընդլայնում և նորերի զարգացում: Այս մասին խոսվել ե գեռևս հուլիսյան պիեսումի բանաձևում: Թեզիսիները կրկնում են

հուլիսյան պիեսումում ասածները, բայց հարցը դնում են ավելի կոնկրետ կերպով և նրան տալիս են թվական արտահայտություն՝ այդ գործի մեջ վորոշ ներդրումներ անելու: Իմաստով: Ֆրումկինն այստեղ ել առիթ զատկ բժախնդրություն անելու: Նա կարծում ե, վոր զատկ բժախնդրություն անելու: Կարծում ե անհատական տնտեսությանը, յերկորդ ե յերրորդ տեղը՝ կոլեկտիվ տնտեսություններին, ու խորհրդային տնտեսություններին, ապա, ուրեմն, այդ ուրիշ վոչինչ չի նշանակում, բայց յեթե նրա տեսակետի հաղթանակը: Այս ծիծաղելի յե, ընկերներ: Հասկանալի յե, վոր յեթե գործին մոտենալու վիճենք գյուղատնտեսության այս կամ այն ձևերի վիճենք գյուղատնտեսության առ կամ այն ձևերի վետք կշռի տեսակետից, ապա ուրեմն առաջին տեսակարար կշռի տեսակետից, ապա ուրեմն առաջին տեսակարար կշռի տեսակետից, ապա կոլեկտիվ տնտեսություններին ու խորհրդային տնտեսությունները:

Իսկ յեթե գործին մոտենալու լինենք տնտեսության տիպի տեսակետից, այն տեսակետից, թե տնտեսությունների ձևերից վոր ձեռն ե ավելի մոտ մեզ սությունների ձևերից վոր ձեռն ե ավելի մոտ մեզ առաջին տեղը պետք ե տալ կոլեկտիվ տնտեսություններին: Վորոնք անհատական գյուղացիական տնտեսության համեմատությամբ տնտեսության բարձրագույն տիպն են հանտությամբ: Միթե զեռևս հարկ կա ապացուցելու, վոր դիսանում: Միթե զեռևս համարապես ընդունելի այս յերկու տեսակետները հավասարապես ընդունելի յեն մեզ համար:

Ինչ ե պահանջվում, վորպեսզի մեր աշխատանքն ընթանա այդ բոլոր յերեք ճանապարհով, վորպեսզի մենք գործնականորեն հասնենք գյուղատնտեսության

և, առաջին հերթին, հացահատիկների տնտեսության գարգացման տեմպի բարձրացմանը:

Դիրա համար անհրաժեշտ է, ամենից առաջ, մեր կուսակցական կադրերի ուշադրությունն ուղղել զյուղատնտեսության կողմը և այն բենել հացահատիկների խնդրի կոնկրետ հարցերի վրա: Պետք է թուղնել գյուղատնտեսության վերաբերյալ ընդհանուր ֆրազներն ու դատարկախոսությունը և անցնել վերջապես, Գործնական ձեռնարկումների մշակման հացահատիկի տնտեսությունը բարձրացնելու համար զանազան շրջանների բազմազան պայմաններին համապատասխան, ժամանակ և խոսքից գործի անցնել և զբաղվել, վերջապես, այն կոնկրետ հարցով, թե ինչպես բարձրացնել բերքատվությունը և ընդարձակել չքավոր-միջակ անհատական տնտեսությունների ցանքսերի տարածությունը, ինչպես բարելավել ու զարգացնել կոլեկտիվ տնտեսությունները և խորհրդային տնտեսությունները, ինչպես կազմակերպել գյուղացիների ոգնության գործը՝ նրանց լավագույն սերմացուներ և աղնվայեղ անսառւններ բաշխելու գծով, ինչպես կազմակերպել վարձակայանների միջոցով գյուղացիներին մեքենաներով և այլ գործիքներով ոգնություն ցուց տալու գործը, ինչպես ընդարձակել ու բարելավել կոնտրակտացիայի և, ընդհանրապես, գյուղատնտեսական կողերացիայի գործը, և այլն և այլն:

Զայն-Այդ պրակտիցիզմ եւ:

Ստալին.—Այդպիսի պրակտիցիզմը մեզ բացարձակապես անհրաժեշտ է, վորովհետեւ առանց դրան մենք կարող ենք հացահատիկի պրոբլեմի լուծման լրջադույն դորժը խեղիկ առհստարակ գյուղատնտես-

սության մասին դատարկախոսելով: Կենտկոմը նպատակ է դրել կազմակերպել մեր գլխավոր հացարեր շրջանների հիմնական աշխատողների կոնկրետ ցումները գյուղատնտեսության գարգացման հարցերի մասին ժողովականությում և Քաղբյուրոյում:

Այս պլենումում դուք լսելու յեք ընկեր Անդրյավի գեկուցումը, վոր վերաբերում և հացահատիկի պլոբը լմի լուծման ուղիներին Հյուսիսային կովկասում: Լմի կարծում եմ, վոր հետագալում մենք առիթ կունանք հերթով նման զեկուցումներ լսելու Ուկրայինայի: Սիրիրի, ՄերձՎոլգյան շրջանի և այլ շրջաններայի: Սիրիրի, ՄերձՎոլգյան շրջանի մասին: Այս բացարձակագլես անհրաժեշտ է, վորի մասին: Այս բացարձակագլես անհրաժեշտ է, վորի մասին կուսակցության ուշադրությունն ուղղենք հացահատիկի պլոբը կուսակցության ուղագրությունները և մեր կուսակցական կազմատիկի պլոբը կողմը և մեր կուսակցական կազմատիկի պլոբը կուսակցության անդապիսի ճանապարհի վրա կանգնեցրերը վերջապես այնպիսի ճանապարհի վրա կապիկացներ, վորպիսզի նրանք այսուհետև հացահատիկի պլոբը կուսակցության անդապիսի ճանապարհի վրա կուսակցության անցնեն:

Յերկրորդ՝ անհրաժեշտ և հասնել այնպիսի դրության, վորպիսզի մեր կուսակցական աշխատողները թյան, վորպիսզի մեր կուսակցական աշխատանքի ընթացքում գյուղում իրենց գործնական աշխատանքի միջակներից կուլակներից, չփոխառնիկ տարբերեն միջակներին կուլակներից, լինի կուլակներին հարված չդիպչի, յերբ անհրաժեշտ լինի կուլակներին հարված ծամանակ եւ, վերջապես, լիկվիդացիա անել այդ թող ներփի ասել, սխալները: Որինակ՝ վերցնենք անհատական հարկման հարցը:

Մենք ունենք Քաղբյուրոյի վորոշումը և համաշպատական որենք՝ անհատական հարկման յինթարք պատասխան որենք՝ անհատական հարկման յինթարք պատասխան:

կելու գյուղացիության վոչ ավելի, քան 2—3 տոկոսը, այսինքն կուլակության ամենահարուստ մասը: Իսկ ինչ ե կատարվում իրականում:

Կան մի ամբողջ շարք շրջաններ, վորտեղ հարկում են 10—12, յերեմն ել ավելի տոկոսը, այդպիսով դիպչելով նաև գյուղացիության միջակ մասին: Ժամանակը չե վերջ տալ այս հանցագործությանը: Իսկ մեր թանգարին «քննադատները» այս և սրանց նման խայ «առակությունները վերացնելու կոնկրետ միջոցներ նշելու փոխարեն բառախաղով են զբաղվում, առաջարկելով փոխարինել «կուլակների ամենահարուստ մասը» բառերը «կուլակների ամենազորեղ մասը» կամ «կուլակների ամենավերին շերտը» բառերով: Կարծես թե այդ միևնուշնը չե: Ապացուցված ե, վոր մենք եւնենք մոտ 5 տոկոս կուլակություն: Ապացուցված ե, վոր անհատական հարկման որենքը մեղանում հարկում ե ծխերի 2—3 տոկոսը, այսինքն կուլակների ամենահարուստ մասը: Ապացուցված ե, վոր գործնականում այդ որենքը խախտվում ե մի ամբողջ շարք շրջաններում: Իսկ մեր «քննադատները», փոխանակ այդ յերեւութների վերացման կոնկրետ միջոցները նշելու, բառերի քննադատություն են ծավալում, չկամենալով հասկանալ, վոր դրանով դրությունը մաղմչափ անդամ չի փոխվում:

Իսկական աղանդավորական քարոզիչներ ..

Զայն.—Առաջարկում են անհատական հարկման յենթարկել բոլոր կուլակներին:

Սօսալին.—Այդ դեպքում պետք է պահանջել վերացնելու 2—3 տոկոսային: անհատական հարկման որենքը:

Մինչդեռ յես չեմ լսել վոր մեկն ու մեկը պահանջեր վերացնել անհատական հարկման որենքը: Ասսում են, թե անհատական հարկման որենքի սպահանոների կամայական լայնացումը նպատակ ունի լրացնել տեղական բյուջեն: Բայց տեղական բյուջեն չի կարեն լրացնել որենքի խախտման միջոցով, կուսակցության գիրեկափակվի խախտման միջոցով: Հեղափոխական որինականության կիմնագործումը, կոնտրակտացիայի կարգով չքաղորմիշակ տնտեսություններին գործնական ոգնություն հասցնելը և այլն, նշանակելի չափով կուժեղացնեն գյուղացու տնտեսական շահագրգոռությունը Ընկ. Ֆրումկինը կարծում ե, թե մենք սպահանցինք կամ համարյա թե սպանեցինք այդ շահագրգոռությունը, զրկելով գյուղացուն տնտեսական հեռանկարչությունը: Այդ, ինարկե, անհեթեթություն ե: Յեթե այդ ճիշտ ե, այն ժամանակ անհասկանալի յե, թե ել ինչով ե պահպանվում բանվոր դասակարգի կապն ու դաշինքը գյուղացիության հիմնական մասսաների հետ: Հո չե կարելի կարծել, թե այդ դաշինքը բարոյական դաշինք ե: Վերջապես պետք ե հասկանալ, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը հաշվի վոր դաշինք դաշինք ե, յերկու դասակարգի շահերի վրա հիմնված դաշինք ե, յերկու դասակարգի շահերի վրա հիմնված դաշինք յի յերկու դասակարգի տակական դաշինք, բանվորների և գյուղացիության հիմնական մասսաների դասակարգային դաշինք, վորի նպատակն ե փոխադարձ ոգուստը:

Մեր կուսակցությունը գոյություն ունի, նա դեռևս լիկվեդացիսյի յենթարկված չե: Խորեգտային դշնանությունը գոյություն ունի, նա դեռևս լիկվեդացիայի յենթարկված չե: Յեթե տեղական բյուջեցիայի յենթարկված այս պետք է դնել անդամ:

դական բյուջեյի հարցը. և վոչ թե խախտել որենքներն ու փոխել կուսակցության ցուցումները:

Այսուհետեւ անհրաժեշտ ե ավելի ևս գարգացնել անհատական չքավոր և միջակ տնտեսությունների խթանումը: Հասկանալի յե, վոր յեթե մենք սպանեցինք. կամ զրեթե սպանեցինք գյուղացիության տնտեսական շահագրգոռությունը, զրկելով գյուղացիներին տնտեսական հեռանկարից, ապա մեղանում վհչ կսպալիիներ և վոչ ել բանվոր գասակարգի և գյուղացիության դաշինք: Ակներեւ ե, վոր այսաեղ կարող ե խոսք լինել վոչ թե չքանչորամիջակային մասսաների տնտեսական շահագրգոռությունն «ստեղծելու» կամ «աղատարձակելու» մասին, այլ այն ուժեղացնելու և առավել ևս գարգացնելու մասին բանվոր գասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների փոխադարձ ողտի համար: Հենց այդ են վկայում, ահա, ժողովրդական տնտեսության ստուգիչ թվերին վերաբերող թեղիսները:

Անհրաժեշտ ե, վերջապես, ուժեղացնել գյուղին ապրանքներ հայթայթելը: Յես նկատի ունեմ ինչպես սպառման ապրանքները, այնպես ել, մանավանդ, արտադրական բնույթ ունեցող ապրանքները (մեքենաները. պարարտանյութերը և այլն), վորոնք կարող են բարձրացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Չի կարելի ասել, թե այս սպառիդում ամեն ինչ կարգին է: Դուք գիտեք, վոր ապրանքի սպիրիտերը յերեսույթները գեռես լիկիդացիայի չեն յենթարկված և, թերևս, այնքան ել շուտ չեն յենթարկվի: Մեր կուսակցության վորոշ շրջաններում գոյություն ունի այն իլլյուզիան, թե մենք հենց այժմ ենք

կարող ենք լիկիդացիայի յենթարկել ապրանքի սովոր Այս, դժբախտաբարը, ճիշտ չե: Պետք ե նկատի առնել, վոր ապրանքային սովի յերեսույթները, նախ՝ կապված են բանվորների և զյուղացիների բարեկեցրության տճանան հետ, այն ապրանքների վճարունակ պահանջի վիթխարագույն աճման հետ, վորոնց արտադրությունը տարեցտարի բարձրանում ե, բայց վորոնք վողջ պահանջը բավարարել չեն կարողանում, և յերկրորդ՝ արդյունաբերության վերակառուցման արդի շրջանի հետ: Արդյունաբերության վերակառուցում նշանակում է միջոցների տեղափոխությունն սպառման միջոցները արտադրելու ասպարիզից վեպի արտադրության միջոցներ արտադրելու ասպարեզը: Առանց սրա արդյունաբերության վորեւ լուրջ վերակառուցում չի լինում և չի յիշ կարող լինել մանավանդ՝ մեր խորհրդակին պայմաններում:

Բայց ինչ ե նշանակում այս: Այս նշանակում ե, վոր զրամ և զրվում նոր ձեռնարկությունների կառուցման մեջ, վոր աճում ե քաղաքների և նոր սպառուցման մեջ, վոր աճում ե քաղաքների և նոր ձեռնարկություններով թիվը, մինչդեռ այդ նոր ձեռնարկությունների կարող են ապրանքային նոր մասսա տալ միմիայն 3-4 տարուց հետո: Դժվար չե ըմբռնել, վոր այս հանդամանքը չի կարող նպաստել ապրանքային սովի լիկիդացիային:

Նշանակում ե արդյոք այս, թե մենք պիտի ձեռներու ծալած նստենք և խոստովանենք մեր անզորությունն ապրանքային սովի յերեսույթների հանդեպ: Վոչ, չի նշանակում: Խնդիրն այն ե, վոր մենք կարող ենք յեվ պետք ե մի շարք կոնկրետ միջոցների ձեռաւրկենք՝ ապրանքային սովը բուլացնելու իեվ չափա-

Վորելու համար: Այս կարելի յե անել, և այս մենք պարտավոր ենք անել հենց ալժմ ևեթ: Սրա համար տնհրաժեշտ է ուժ տալ արդյունաբերության աշնակիսի ճյուղերին, վորոնք անմիջականորեն կապված են զյուղատնտեսական արտադրության բարձրացման հետ (Ստալինվրագի տրակտորային գործարանը, Ռոստովի՝ գյուղատնտեսական մեքենաներինը, Վորոնեժի՝ սերմազարչներինը և այլն): Սրա համար անհրաժեշտ է ապա ուժեղացնել ըստ հնարավորության արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք կապված են զեֆիցիտային բնույթ ունեցող ապրանքային մասսայի ավելացման հետ) մահուր, ապա կեղեն, մեխ և այլն):

Ընկեր Կուբբակն ասում եր, թե ժողովրդական տնտեսության վերստուգիչ թվերի համաձայն՝ այս տարի գյուղացիական անհատական տնտեսությանն ավելի քիչ միջոցներ են տրամադրվում, քան անցյալ տարի: Յես կարծում եմ, վոր այդ ճիշտ չե: Ընկեր Կուբբակն, ըստ յերևութին, հաշվի չի առնում այն, վոր այս տարի մենք կոնտրակտացիայի կարգով մոտ 300 միլիոն ռուբլի վարկ հնք տրամադրում (գրեթե 100 միլիոն ռուբլով ավելի, քան անցյալ տարի): Յեթե հաշվի առնենք այս հանգամանքը, — իսկ այս չի կարելի հաշվի չառնել, — ապա դուրս կգա, վոր այս տարի գյուղացիական տնհատական տնտեսության զարգացման համար մենք անցյալ տարվանից ավելի յի՞նք տալիս:

Ինչ վերաբերում է հին և նոր կոլեկտիվ տնտեսություններին և խորհրդային տնտեսություններին, ապա այդ գործի մեջ այս տարի 180 միլիոն ռուբլի յե գրվում (անցյալ տարվանից մոտ 75 միլիոն ռուբ-

լով տվելի): Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կոլեկտիվ տնտեսությունների, խորհրդային տնտեսությունների և կոնտրակտացիայի մեթոդի վրա: Չի կարելի նայել այդ ամենին, վորպես սոսկ ապրանքային հացի գծով մեր ռեսուրսներն ուժեղացնելու միջոցի վրա: Դրանք միաժամանակ բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների կապի մի նոր ձև էն հանդիսանում:

Կոնտրակտացիայի մեթոդի մասին մեզանում արդեն բավականաշափ խոսվել ե, և յես այդ մասին յերկար խոսել չեմ ուզում: Ամենքի համար հասկանալի յե, վոր մասսայական կոնտրակտացիայի մեթոդը գյուղացնում և գյուղացիական անհատական տնտեսությունների ջանքերի միավորման գործը, մշտականության տարր և մտցնում պետության և գյուղացիության փոխհարաբերությունների մեջ և այդպիսով ամրացնում ե քաղաքի և գյուղի շաղկապը:

Կուբենայի ձեր ուշադրությունը հրավերել կոլեկտիվ տնտեսությունների և մանավանդ խորհրդային տնտեսությունների վրա, վորպես լծակների, վորոնք դյուրացնում են գյուղատնտեսության վերակազմության գործը նոր տեխնիկայի հիման վրա և վորոնք հեղափոխություն են առաջ բերում գյուղացիության մեջ, ոգնելով նրան ազատագրվելու անշարժությունից և հին քարացած ձևերից: Մեր հացարեր շրջաններում տրակտորների և գյուղատնտեսական խոշոր մեքենաների յերևալն անհետևանք չի կարող անցնել շրջանակի գյուղացիության համար: Սերմացվով, մեքենաներով և տրակտորներով շրջակայի գյուղացիությանը հասցված ոգնությունը, անկասկած, կգնահատվի

գյուղացիության կողմից և հաշվի կառնվի, վորպես բանվորական պետության ուժի և հզորության նշան, բանվորական պետության ուժի և հզորության նշան, ոյն պետության, վորոն աշխատում եւ գուրս բերել նրան գյուղատնտեսության լուրջ վերելքի լայն ճանապարհ էր. Այս հանգամանքը մենք մինչև այժմ հաշվի չենք առել և, թերևս, այժմ ել բավականաչափ հաշվի չենք առնում: Բայց յես կարծում եմ, վոր այս ամենագլխաւառնում: Վայց յես կարծում եմ, վոր այս ամենագլխաւառնում:

Սրանք են ընդհանրապես այն ուղղիներն ու յեղանակները, վորոնց գծով պետք ե առաջ ընթանամեր հացահատիկի պրոբլեմի լուծման գործում:

Սրանք են ընդհանրապես այն ուղղիներն ու յեղանակները, վորոնց գծով պետք ե առաջ ընթանամեր հացահատիկի պրոբլեմի լուծման գործում:

Համար:

ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՀԱՇՏՎՈ- ՂԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑՈՒՑԱՆՆԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անցնենք այժմ մեր թեքիների լերորդ հիմնա-
կան հարցին—լենինյան գծից կատարած թեքումների
հարցին:

Թեքումների սոցիալական բաղան մեր լերկում
մանր արտադրության գերիշխան փաստն ի, կապիտա-
լիստական տարրերից մանր արտադրության աճելու
փաստն ե, մեր կուսակցությունը մանր-բուրժուական
փաստն ի, մեր կուսակցությունը մանր-բուրժուական
